# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### 28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 70-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1. Ապարան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի առաջին նստաշրջանի հինգերորդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

(զեկուցող՝ Կ. Եղիազարյան)

2. Ապարան համայնքի 2023 թ բյուջեի ֆոնդային մասի ծախսային հոդվածներում ավելացումներ և պակասեցումներ կատարելու և Ապարան համայնքի ավագանու 20.12.2022 թ N 153-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Ս.Ճերիկյան)

3.Ապարան համայնքի ավագանու 25.11.2022 թ <<Ապարան համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թ տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին>> N 142-Ա որոշման N 1 հավելվածում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Գ. Աբրահամյան)

4.Ապարան համայնքի Ապարան քաղաքի բնակիչներ՝ ամուսիններ Սամվել և Արփիկ Արշակյանների ընտանիքին սեփականության իրավունքով հողամաս և շարժական տնակ անհատույց տրամադրելու մասին

(զեկուցող՝ Ա. Կարապետյան)

5. Համահայկական ամառային 8-րդ խաղերին Ապարան համայնքի մասնակցությունը ապահովելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝ Գ. Խաչատրյան)

6. Ապարան համայնքի մի խումբ բնակիչների հարկային արտոնություններ տրամադրելու մասին

(զեկուցող՝ Ն. Սիրեկանյան)

7. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

8. Ապարանի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

9. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շենավան գյուղի վարչական տարածքում գտնվող 02-082-0210-0001 կադաստրային ծածկագրով 4,3958 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

10. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

11. Ապարան համայնքի ավագանու 28.04.2023թ. N 44-Ա որոշմամբ հաստատված կից աղյուսակում փոփոխություն կատարելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

12. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին

(զեկուցող՝ Ի. Թադևոսյան)

Ավագանի՝ (կողմ-13) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### 28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 71-Ն

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱԿԱՍԵՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2022 Թ N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով, Ապարան համայնքի բյուջեում կատարել նախահաշվային փոփոխություններ:

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարան համայնքի 2023 թ ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) <<Ապարանի ճանապարհային տրանսպորտ>> բնագավառի ծախսային 5113 հոդվածից պակասեցնել 100.000,0 հազ. դրամ

բ) <<Բնակարանային շինարարություն>> բնագավառի ծախսային 5112 հոդվածին ավելացնել 80.000,0 հազ.դրամ

գ) << Ապարանի համայնքի Կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ի հատկացնել 20.000,0 հազ. դրամ՝ ՀՈԱԿ-ի նախահաշվի 5122 հոդվածով նախատեսված ծախսերը սպասարկելու նպատակով

2.<<Ապարան համայնքի 2023 թ բյուջեն հաստատելու մասին>>Ապարան համայնքի ավագանու 20.12.2022 թ N 153-Ա որոշման N 2-3-6-րդ հատվածների N 2-3-4-րդ հավելվածներում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ավագանի՝ (կողմ-13) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*Հավելված N2*
*Ապարան համայնքի ավագանու*
*28.06.2023թ.N71-Ն որոշման*

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2022 Թ N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | 0,0 | | 0,0 |
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 3610 + տող 3620 + տող 3630 + տող 3640 + տող 3650 + տող 3660), այդ թվում՝ | 100000,0 | 0,0 | 100000,0 |
| 2610 | 6 | 1 | 0 | Բնակարանային շինարարություն, որից՝ | 80000,0 | 0,0 | 80000,0 |
| 2611 | 6 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | 80000,0 | 0,0 | 80000 |
| 2660 | 6 | 6 | 0 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | 20000,0 | 0,0 | 20000,0 |
| 2661 | 6 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 20000,0 | 0,0 | 20000,0 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝ | -100000 | 0,0 | -100000 |
| **2450** | **4** | **5** | **0** | Տրանսպորտ, որից՝ | -100000 | 0,0 | -1000000 |
| **2451** | **4** | **5** | **1** | Ճանապարհային տրանսպորտ | -100000 | 0,0 | -100000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ի.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ... «ԱՊԱՐԱՆԻ ... ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ... *05028552*

*Հավելված N3*
*Ապարան համայնքի ավագանու*
*28.06.2023թ.N71-Ն որոշման*

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2022 Թ N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ N3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող 5000 + տող 6000) այդ թվում՝ | x | 0 | 0 | 0 |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + տող 5300 + տող 5400), այդ թվում՝ | x | 100000 | x | 100000 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում՝ | x | 100000 | x | 100000 |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112 + տող 5113), որից՝ | x | 100000 | x | 100000 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 80000 | x | 80000 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 20000 | x | 20000 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | -100000 | x | -100000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ի.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*Հավելված N4*
*Ապարան համայնքի ավագանու*
*28.06.2023թ.N71-Ն որոշման*

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2022 Թ N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ N4 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակարգ-ման հոդված | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | | 0 | 0 | 0 |
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 3610 + տող 3620 + տող 3630 + տող 3640 + տող 3650 + տող 3660), այդ թվում՝ | | 100000 | 0 | 100000 |
| 2610 | 6 | 1 | 0 | Բնակարանային շինարարություն, որից՝ | | 80000 | 0 | 80000 |
| 2611 | 6 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | | 80000 | 0 | 80000 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 80000 | 0 | 80000 |
| 2660 | 6 | 6 | 0 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | | 20000 | 0 | 20000 |
| 2661 | 6 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 20000 | 0 | 20000 |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | 20000 | 0 | 20000 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝ | | -100000 | 0 | -100000 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | | -100000 | 0 | -100000 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | -100000 | 0 | -100000 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | -100000 | 0 | -100000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ի.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի


ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### 28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 72-Ա

### ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.11.2022 Թ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2023 Թ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 142-Ա ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներին համապատասխան, համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 16.12.2022 թ ընդունված ՀՀ օրենքի պահանջների.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1.«Ապարան համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023թ տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին» համայնքի ավագանու 25.11.2022թ N 142-Ա որոշման N 1 հավելվածում կատարել համապատասխան լրացումներ և փոփոխություններ և այն վերահաստատել նոր խմբագրությամբ:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել տեղական տուրքերի և վճարների 2023 թ տեսակների և դրուքաչափերի հրապարակայնությունը և թափանցիկությունը, մոբիլիզացնել աշխատակազմի ուժերը դրանց գանձումը ժամանակին ապահովելու, ծավալած գործունեության համար սահմանված թույլտվությունները ժամանակին և օպերատիվորեն տրամադրելու ուղղությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թ հուլիսի 1-ից:

Ավագանի՝ (կողմ-15) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սեակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
Ապարան համայնքի ավագանու
25.11.2022թ. N142-Ա որոշման
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ՝
Ապարան համայնքի ավագանու
28.06.2023թ. N72-Ա որոշման

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2023 Թ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| հ/հ | Տեղական տուրքի և վճարի տեսակը | ԴՐՈՒՅՔԱՉԱՓ (ԴՐԱՄ) | |
|---|---|---|---|
| | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 1-ԻՆ ԳՈՏԻ | 2-ՐԴ ԳՈՏԻ |
| 1. | Համայնքի վարչական տարածքում ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ | | |
| 1.1 | հիմնական շենքերի և շինությունների համար | | |
| ա. | մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական/ամառանոցային/տների համար՝ | 15.000 | 15.000 |
| բ. | մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար | 15.000 | 15.000 |
| 1.2. | Բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների, այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենք-շինությունների համար՝ | | |
| ա | 201-ից 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 13-16 գոտի | 60.000 | 45.000 |
| - | 201-ից 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 17-18 գոտի | 0 | 30.000 |
| բ | 501-ից 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 13-16 գոտի | 200.000 | 150.000 |
| - | 501-ից 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 17-18 գոտի | 0 | 100.000 |
| գ | 1001–ից 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 13-16 գոտի | 400.000 | 300.000 |
| - | 1001–ից 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 17-18 գոտի | 0 | 200.000 |
| դ | 3001-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 13-16 գոտի | 1.500.000 + 3000 քմ գերազանցող յուրաքանչյուր 3000 քմ-ին՝ + 1.500.000 | 1.000.000 + 3000 քմ գերազանցող յուրաքանչյուր 3000 քմ-ին՝ + 1.000.000 |
| - | 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝17-18 գոտի | 0 | 1.000.000 + 3000 քմ գերազանցող յուրաքանչյուր 3000քմ-ին՝ + 1.000.000 |
| 1.3 | Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ | | |
| ա | մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար՝ 13-16 գոտի՝ | 10.000 | 10.000 |
| - | մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար՝ 17-18 գոտի՝ | 0 | 5.000 |
| բ. | 20 քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար՝ 13-16 գոտի | 20.000 | 20.000 |
| - | 20 քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար՝ 17-18 գոտի | 0 | 10.000 |
| 1.4 | Շենքերի և շինությունների, այդ թվում հասարակական և արտադրական նշանակության շենք-շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա համար՝ | | |
| ա. | 200-500քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝ 13-16 գոտի՝ | 120.000 | 120.000 |
| - | 200-500քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝ 17-18 գոտի՝ | 0 | 60.000 |
| բ. | 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝ 13-16գոտի՝ | 300.000 | 200.000 |
| - | 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝ 17-18գոտի՝ | 0 | 200.000 |
| գ. | 1001-3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝13-16գոտի՝ | 600.000 | 400.000 |
| - | 1001-3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝17-18գոտի՝ | 0 | 400.000 |
| դ. | 3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքշինությունների համար՝13-16գ | 2.000.000 | 1.200.000 |

| | | | |
|---|---|---|---|
| | | +3000 քմ գերազանցող յուրաքանչյուր 3000 քմ-ին՝ + 2.000.000 | +3000 քմ գերազանցող յուրաքանչյուր 3000 քմ-ին՝ + 1.200.000 |
| - | 3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքշինությունների համար՝17-18գ | | 1.000.000 + 3000 քմ գերազանցող յուրաքանչյուր 3000 քմ-ին՝ + 1.000.000 |
| ե. | Շինարարության թույլտվության ժամկետները սահմանված ժամկետի մինչև 20% չափով, բայց ոչ ավել քան մեկ տարի ժամկետը, 1-ին անգամ երկարաձգելիս սահմանված տուրքը հաշվարկվում է 13-16 և 17-18 գոտիների համար՝ | Բազային տուրքի 0,5 գործակցի կիրառմամբ | Բազային տուրքի 0,5 գործակցի կիրառմամբ |
| 2 | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | | |
| ա | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ | 3.000 | 3.000 |
| բ | բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքիգաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (աթ՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա՝ բացի սույն կետի <ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1/1-ին կետով սահմանված նորմերը՝ շենքերի մակերեսի ավելացման կամ գործառնական նշանակության փոփոխության մասով | 3000 + 1-ին կետի (ա) կամ (բ) ենթակետին համապատասխան դրույքաչափ | 3000 + 1-ին կետի (ա) կամ (բ) ենթակետին համապատասխան դրույքաչափ |
| գ | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (աթ՝ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասին 1-ին կետով սահմանված նորմերը: | 1-ին կետի (ա) կամ (բ) ենթակետին համապատասխան դրույքաչափ | 1-ին կետի (ա) կամ (բ) ենթակետին համապատասխան դրույքաչափ |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /ապամոնտաժման/ թույլտվության համար՝ | 5.000 | 5.000 |
| 4. | Համայնքի վարչական տարածքում լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200.000 | 200.000 |
| 4.1 | Համայնքի վարչական տարածքում լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200.000 | 200.000 |
| 4.2 | Համայնքի վարչական տարածքում լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200.000 | 200.000 |
| 5 | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | 150.000 | 100.000 |
| 5.1 | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 150.000 | 100.000 |
| 5.2 | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 150.000 | 100.000 |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առեւտրի կետերում, ավտոլվացման կետ-երում, ավտո-մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայու-թյան օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, տարեկան՝ | 30.000 | 18.000 |
| 7 | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առեւտրի կետերում, ավտոլվացման կետերում, կամավտոմեքե-նաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ | 20.000 | 10.000 |
| 8 | Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝ տարեկան՝ | 25.000 | 15.000 |
| 9 | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ | | |
| ա. | Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| -- | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 5.000 | 4.000 |
| -- | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 6.000 | 5.000 |
| -- | 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դոպքում՝ | 7.000 | 6.000 |
| -- | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 10.000 | 8.000 |
| -- | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 13.000 | 10.000 |
| -- | 501 և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 25.000 | 20.000 |
| բ. | Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| -- | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 4.000 | 3.000 |
| -- | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 5.000 | 4.000 |
| -- | 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 6.000 | 5.000 |
| -- | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 10.000 | 8.000 |
| -- | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 12.000 | 10.000 |
| -- | 501 և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝ | 22.000 | 18.000 |
| 10 | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի տարածքում բացօթյա առևտրի թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա 1 քմ համար՝ | 175 | 105 |
| 11 | Համայնքում ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տարեկան՝ | | |
| ա. | Առևտրի օբյեկտների համար՝ | 30.000 | 20.000 |
| բ. | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50.000 | 30.000 |
| գ. | բաղնիքների / սաունաների / համար | 200.000 | 100.000 |
| դ. | շահումով խաղերի համար՝ | 250.000 | 125.000 |
| ե. | վիճակախաղերի համար՝ | 100.000 | 50.000 |
| 12. | Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման համար՝ առանձնացված յուրաքանչյուր վայրում թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| ա. | հիմնական շինությունների ներսում՝ | | |
| -- | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 4000 | 3000 |
| -- | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 6000 | 5000 |
| -- | 51-ին մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 10000 | 8000 |
| -- | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 12000 | 10000 |
| -- | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 15000 | 12000 |
| -- | 501-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար | 25.000 | 20.000 |
| բ. | Ոչ հիմնական շինությունների ներսում՝ | | |
| -- | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 1.000 | 800 |

| | | | |
|---|---|---|---|
| -- | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 1.500 | 1.000 |
| -- | 51-ին մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 3.000 | 2.000 |
| -- | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 5.000 | 4.000 |
| -- | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության համար՝ | 6.000 | 5.000 |
| 13. | Ապարան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տարե | 5.000 | 0 |
| 14. | Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամիս 1 քմ համար՝ /բացառությամբ՝ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմայրուղու օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրված գովազդների/ | | |
| ա. | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1.000 | 600 |
| բ. | թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1750 | 1.050 |
| գ. | Սոցիալական գովազդի համար | 0 | 0 |
| դ. | այլ արտաքին գովազդի համար՝ | 750 | 450 |
| ե. | Դատարկ գովազդային վահանակների համար՝ /25 %/ | 187,5 | 112,5 |
| զ. | Կազմակերպության գովազդի տարածման համար՝ | 75 | 45 |
| 15. | Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացում, ինչպես նաև ֆիրմային անվամումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարում՝ | 75.000 | 50.000 |
| 16. | Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար, յուրաքանչյուր մեքենայի համար, տարեկան՝ | 7.500 | 5.000 |
| 17. | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման (մատուցման) թույլտվության համար, տարեկան՝ | 250.000 | 150.000 |
| 18. | Համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ տարեկան՝ | 100.000 | 50.000 |
| 19. | Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության գործունեությա թույլտվության համար՝ տարեկան՝ | | |
| ա. | Կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի և շոգեբաղնիքի համար՝ տարվա համար՝ | 20.000 | 10.000 |
| բ. | Հեստապարային ակումբի համար՝ տարվա համար՝ | 100.000 | 75.000 |

| | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | | |
|---|---|---|---|
| 1 . | Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու թույլտվության ձևակերպման համար՝ | 15.000 | 12.000 |
| 2. | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, ուժեղացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ | 15.000 | 12.000 |
| 3. | Նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ | 12.000 | 10.000 |
| 4. | Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելիս անհրաժեշտ չափագրման և նմանատիպ այլ աշխատանքների համար՝ | 3.000 | 3.000 |
| 5. | Համայնքում կազմակերպվող աճուրդների մասնակցության վճար՝ | 10.000 | 10.000 |
| 5.1 | Համայնքում կազմակերպվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության մրցույթի մասնակցության վճար՝ | 5.000 | 5.000 |
| 5.2 | Համայնքում կազմակերպվող աճուրդներին մուտքի վճար՝ | 3.000 | 3.000 |
| 6. | Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու թույլտվության համար՝ | 5.000 | 3.000 |
| 7. | Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝ | 1000 | 1000 |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայության դիմաց փոխհատուցման վճար | 2000 | 2000 |
| 9. | Համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝ համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ | | |
| 9.1 | ՔԿԱԳ՝ ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքի տրամադրման համար՝ | 2.000 | 2.000 |
| 9.2 | Պետռեգիստրի գործառույթների իրականացման համար՝ | 3.000 | 3.000 |
| 9.3 | Կադաստրի գործառույթների իրականացման համար՝ | | |
| ա. | Անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման համար՝ /բնակավայրի, արտադրական, հասարակական նշանակության գույքի/ | 2000 | 2000 |
| բ. | Անշարժ գույքի առուվաճառքի և նվիրատվության իրավունքի պետական գրանցման համար՝/բնակավայր,արտադրական,հասարակական նշան. գույք | 3000 | 3000 |
| գ. | Գյուղ. նշանակության գույքերի իրավունքի պետական գրանցման համար՝ | 1500 | 1500 |
| դ. | Միասնական տեղեկանքի տրամադրման համար՝ | 1000 | 1000 |
| 10 | Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափը՝ 1 քմ համար | 0 | 0 |
| 11 | Համայնքապետարանի վարչական շենքերում տարածքների վարձակալության տրամադրման 1 քմ-ի  ամսեկան վարձավճարի չափը | 500 | 500 |
| 12 | Հանդիսության սրահի տրամադրման օրական վճարի չափը, այդ թվում՝ | | |
| 12.1 | հուղարկավորման արարողության համար՝ | անվճար | անվճար |
| 12.2 | նախադպրոցական և դպրոցական երեխաների միջոցառումների համար | անվճար | անվճար |
| 12.3 | հարսանեկան արարողության դեպքում՝ | -- | 40.000 |
| 12.4 | մկրտության, ծննդյան տարեդարձի և այլ արարողությունների դեպքում | -- | 20.000 |
| 13 | Մշակութային դահլիճներն օգտագործման տրամադրման վճարի չափը՝ օրական՝ | 20.000 | 15.000 |
| 14 | Մշակույթի կենտրոնում համայնքի ֆինանսավորմամբ գործող խմբերում վարձավճարի 2022 թ դրույքաչափը՝ | 0 | 0 |
| 15 | Մարզադպրոցներում համայնքի ֆինանսավորմամբ գործող խմբերում վարձավճարի 2022 թ դրույքաչափը՝ | 0 | 0 |
| 16 | Ապարան համայնքի մշակույթի կենտրոնի ժողովրդական և դասական պարային խմբերի ծառայություններից օգտվող երեխաների ծնողական վարձավճարների 2023 թ դրույքաչափերը, բացառությամբ համայնքի կողմից ֆինանսավորվող ցուցադրական խմբերում ընդգրկված երեխաների: | 4.000 | 4.000 |
| 17 | Մարզադպրոցների դահլիճներն օգտագործման տրամադրման վճարի չափը՝ օրակ | 1000 | 700 |
| 18 | Ապարան համայնքում աղբահանության վարձավճարի 2023 թ դրույքաչափերը՝ | Հավելված 1.1 | |
| 19 | Ապարան համայնքում խմելու ջրի սպասարկման վարձավճարի 2023թ դրույքաչափ՝ | Հավելված 1.2 | |
| 20 | Ապարան համայնքի մանկապարտեզները հաճախող երեխաների ծնողական վարձավճարի 2023 թ դրույքաչափը և տրվող արտոնությունները՝ | Հավելված 1.3 | |
| 21 | Ապարան համայնքի արվեստի դպրոցներում սովորող երեխաների ծնողական վարձավճարի 2023 թ դրույքաչափերը և տրվող արտոնությունները՝ | Հավելված 1.4 | |

1-ԻՆ ԳՈՏԻ՝ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔ, ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԱՆՑՆՈՂ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂՈՒ ԿՈՂԵԶՐԵՐԻՆ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

2-ՐԴ ԳՈՏԻ՝ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 21 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

## ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ՝

| Գոտի | Գոտիավորման գործակից | Բնակավայրի անվանումը |
|---|---|---|
| 13-14 | 2,0 | Ք. Ապարան |
| 15 | 2,0 | Արագած, Ափնագյուղ, Երնջատափ, Կայք, Ծաղկաշեն, Շենավան, Հարթավան, Քուչակ, Վարդենուտ, Վարդենիս |
| 16 | 2,0 | Արայի, Լուսագյուղ |
| 17 | 1,0 | Եղիպատրուշ, Ձորագլուխ, Թթուջուր, Նիգավան, Չքնաղ, Շողակն, Ջրամբար, Սարալանջ |
| 18 | 1,0 | Մելիքգյուղ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԻԴԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 73-Ա

## ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ ՍԱՄՎԵԼ ԵՎ ԱՐՓԻԿ ԱՐՇԱԿՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ՇԱՐԺԱԿԱՆ ՏՆԱԿ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ՝ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ապարան քաղաքի բնակիչներ, ամուսիններ Սամվել Մխիթարի Արշակյանի և Արփիկ Միհերի Արշակյանի 4 անձից բաղկացած ընտանիքը հանդիսանում է բնակարանի խիստ կարիքավոր, որի պատճառով բնակվելով ժամանակավոր կացարաններում չեն կարողականում ապահովել հիվանդ և հաշմանդամ երկու անրափահաս երեխաների կեցությանն ու բուժմանն նպաստող տարրական պայմաններ, ամուսիններով նույնպես ունեն առողջական խնդիրներ:

Արփիկ և Սամվել Արշակյանները դիմել են խնդրանքով՝ իրենց ընտանիքին տրամադրելու շարժական տնակ և այն տեղադրելու, ինչպես հետագայում սեփական առանձնատուն կառուցելու նպատակով՝ հողամաս:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և 48-րդ հոդվածների պահանջներով, համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերի, 64-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների, ելնելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի պահանջներից, հիմք ընդունելով Ապարան քաղաքի բնակիչներ Սամվել և Արփիկ Արշակյանների դիմումների վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1. Թույլատրել Ապարան համայնքի ղեկավարին՝ Ապարան քաղաքի բնակիչներ Սամվել և Արփիկ Արշակյանների ընտանիքին սեփականության իրավունքով բնակավայրերի բնակելի կառուցապատման 1000քմ հողամաս և մեկ շարժական տնակ անհատույց տրամադրելու՝ նվիրատվության կարգով:
2. Աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ դիմողների հետ փոխհամաձայնությամբ տեղորոշել հողամասի գտնվելու վայրը և ներկայացնել առաջարկություն:
3. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գնումների մասնագետին՝ սահմանված կարգով կազմակերպել շարժական տնակի գնումը և տրամադրումը:
4. Աշխատակազմին՝ օրենքի պահանջներին համապատասխան ապահովել նվիրատվության անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումները:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեավարի 1-ին տեղակալ Ա.Կարապետյանի վրա:

**Ավագանի՝** (կողմ-15) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 74-Ա

### ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 47-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ,,Գնումների մասին'' ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների, ՀՀ կառավարության 10.10.2019 թ N 1422-Ն որոշման 1-ին մաի 6-րդ կետին համապատասխան, ելնելով չնախատեսված այլ իրավիճակից ու գնման այլ ձևերի կիրառման ժամկետի սղությունից ու անհնարինությունից, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1. Համահայկական ամառային 8-րդ խաղերին Ապարան համայնքի մասնակցությունն ապահովելու նպատակով ստեղծել կազմկոմիտե, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արկադի Կարապետյանի նախագահությամբ:
2. Համաձայնություն տալ՝ Ապարան համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերի մշակույթային ծրագրերի ծախսային բնագավառի 4261 հոդվածից 2,0 միլիոն ՀՀ դրամ հատկացնել Համահայկական ամառային 8-րդ խաղերին համայնքի մասնակցությունն ապահովելու նպատակին՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի կողմից ներկայացված նախահաշվին համապատասխան:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ անհրաժեշտությունից և իրավիճակային հանգամանքներից ելնելով, համահայկական խաղերին պատշաճորեն մասնակցություն ապահովելու համար անհրաժեշտ ապրանքները ձեռք բերել մեկ անձից գնում կատարելու սկզբունքով:
4. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Կարապետյանի վրա:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 75-Ա

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ և 245-րդ հոդվածի 2-րդ մասերի, ՀՀ կառավարության 22.06.2012թ-ի N 822-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1.Ապարան համայնքի 3 բնակավայրերի 5 քաղաքացիների տրամադրել հարկային արտոնություններ՝ հողի հարկի տույժ՝ 441.652 դրամի չափով, շենք-շինության գույքահարկի տույժ՝ 6.504 դրամի չափով:
Ընդամենը՝ 448.156 դրամի չափով, համաձայն՝ հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված

**Ապարան համայնքի ավագանու**
**28.06.2023թ. N75-Ա որոշման**

| Բնակավայր | Հ/Հ | Սոցիալական քարտ | Դիմողի Անուն,Ազգանուն | Հաշվառման հասցե | Սեփականա-տիրոջ Անուն,Ազգանուն | Գույքի գտնվելու հասցե | Հողի հարկ | | Շինություն | | Փոխադրամիջոց | | Լրացուցիչ տեղեկու-թյուններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Ապառք | Տույժ | Ապառք | Տույժ | Ապառք | Տույժ | |
| Վարդենիս | 1 | 3709620090 | Ռոբերտ Ասատրյան | Գ.Վարդենիս 15փ. տ.5/2 | | Գ.Վարդենիս | | 103687 | | | | | Մայր գումարը վճարված է, Սոց.անապահով |
| | 2 | 1704620201 | Ջիվան Համբարձումյան | Գ.Վարդենիս 16փ. տ.3 | | Գ.Վարդենիս | | 102770 | | | | | Մայր գումարը վճարված է, |
| Շողակն | 1 | 3307640380 | Արսեն Մելիքսեթյան | Գ.Շողակն 4փ. տ.9 | Արշավիր Մելիքսեթյան | Գ.Շողակն | | 165823 | | | | | Սեփ. մահացած է,մայր գումարը վճարված է, դիմողը 3րդ կարգի հաշմանդամ է |
| Արագած | 1 | 1602700052 | Գրիշա Հակոբյան | Գ.Արագած 2փ. տ.2 | Կարապետ Հակոբյան | Գ.Արագած | | 30191 | | | | | Սեփ.մահացած է, մայր գումարը վճարված է |
| | 2 | 5103591383 | Էմմա Հովհաննիսյան | Գ.Արագած Գ.Լուսավորչի փ. 6նրբ. տ.1 | Վարդգես Հովհաննիսյան | Գ.Արագած | | 39181 | | 6504 | | | Մայր գումարը վճարված է, դիմողը կենսաթոշակառու |
| | 5 | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | 441652 | | 6504 | | | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԻԴԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Աղյուսակ
Ապարան համայնքի ավագանու
28.06.2023թ. N76-Ա որոշման

| Լոտ | Գտնվելուվայրը | Ծածկագիր | Մակերեսս/ՀԱ/ | Մեկնարկ-այինգինը / ՀՀդրամ | Նպատակային նշանակություն հողատեսքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գ. Եղիպատրուշ 12-րդ փողոց թիվ 20/9 | 0001-0037 | 0.1 | 1.000.000 | Արդյունաբերության, ընդերքօգտագ և այլ արտադ. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ |
| 2 | Գ. Եղիպատրուշ 12-րդ փողոց թիվ 20/10 | 0001-0037 | 0.1 | 1.000.000 | Արդյունաբերության, ընդերքօգտագ և այլ արտադ. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ |
| 3 | Գ.Եղիպատրուշ 12-րդ փողոց 20/11 | 0001-0039 | 0.24558 | 2.500.000 | Արդյունաբերության, ընդերքօգտագ և այլ արտադ. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ |
| 4 | Գ.Եղիպատրուշ 12-րդ փողոց 20/12 | 0001-035 | 0.1 | 1.000.000 | Արդյունաբերության, ընդերքօգտագ և այլ արտադ. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ |
| 5 | Գ.Եղիպատրուշ 12-րդ փողոց 20/13 | 0001-0034 | 0.1 | 1.000.000 | Արդյունաբերության, ընդերքօգտագ և այլ արտադ. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ |
| 6 | Գ.Եղիպատրուշ 12-րդ փողոց 20/14 | 0001-0033 | 0.1 | 1.000.000 | Արդյունաբերության, ընդերքօգտագ և այլ արտադ. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ |
| 7 | Գ.Եղիպատրուշ 12-րդ փողոց 20/15 | 0001-0036 | 0.1 | 1.000.000 | Արդյունաբերության, ընդերքօգտագ և այլ արտադ. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ |
| 8 | Գ.Եղիպատրուշ 12-րդ փողոց 10/10 | 0002-0013 | 0.0428 | 500.000 | Արդյունաբերության, ընդերքօգտագ և այլ արտադ. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ |
| 9 | Գ.Եղիպատրիշ 12-րդ փողոց 10/9 | 0002-0012 | 0.09966 | 1.000.000 | Արդյունաբերության, ընդերքօգտագ և այլ արտադ. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ |
| 10 | Գ. Չքնաղ 2-րդ փողոց 1-փակ թիվ 4/1 | 0014-0005 | 0.1 | 500.000 | Բնակավայրի բնակելի.կառուցապատում |
| 11 | Գ. Չքնաղ 2-րդ փողոց 1-փակ թիվ 4/2 | 0014-0007 | 0.10662 | 500.000 | Բնակավայրի բնակելի.կառուցապատում |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԻԴԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 76-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջների, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.06.2020թ N1023 որոշման պահանջներին համապատասխան, հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.**

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

**1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն համարվող 1.19446 հա հողամասերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել հողամասերի մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի**
**2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:**

**Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)**

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 77-Ա

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 02-082-0210-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 4,3958 ՀԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի դրույթներով, համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջների, Ապարան համայնքի ավագանու 2023թ-ի փետրվարի 16-ի Ապարան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին թիվ 19-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով այն փաստը, որ Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը Ապարան համայնքի Շենավան գյուղի գլխավոր հատակագծի գոտևորման հատակագծով հանդիսանում է՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությամբ՝ կոմունալ ենթակառուցվածքների.**

*Ապարանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Շենավան գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող /ծածկագիր՝ 02-082-0210-0001/՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքօգտագործման գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխել և դարձնել՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության, և կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության:
2. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
3. Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել 2023թ հողային հաշվեկշռում:

Ավագանի՝ (կողմ-17) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 78-Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 3--րդ հոդվածի 1-ին մասի 29 կետի պահանջների, Ապարան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին Ապարան համայնքի ավագանու 16.02.2023թ. N 19-Ա որոշման պահանջներին համապատասխան.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի 7 բնակավայրերի՝ ք. Ապարան գ. Թթուջուր, գ. Ծաղկաշեն, գ. Երնջատափ, գ. Լուսագյուղ, գ. Քուչակ, գ. Եղիպատրուշ բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակությունները փոխելուն՝ համաձայն աղյուսակի:
2. Ընդունել ի գիտություն, որ հողամասերի գործառնական նշանակությունները փոփոխվում են հետագայում օտարելու նպատակով:
3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-17) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Աղյուսակ
Ապարան համայնքի ավագանու
28.06.2023թ. N78-Ա որոշման

| N | Բնակավայր | ծածկագիրը | Մակերեսը /հա | առկա գործառնական նշանակությունը | գործառնական նշանակությունը ըստ բնակավայրի գոտեվորման հատակագծի | Փոփոխվող գործառնական նշանակությունը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լուսագյուղ | 02-051-0023-0004-հց | 0.08 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի բնակելի կառուցապատ |
| 2 | Երնջատափ | 02-042-0042-0003-հց | 0.0032 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի բնակելի կառուցապատ |
| 3 | Ապարան | 02-002-0058-0048 | 0.00558 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հասարակ/ կառուցապ |
| 4 | Ծաղկաշեն | 02-054-0037-0004-հց | 0.04822 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի բնակելի կառուցապատ |
| 5 | Ապարան | 02-002-0036-0001-հց | 0.00645 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հասարակականկառուցապատմ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 6 | Ապարան | 02-002-0058-0063-հց | 0.002 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հասարակական կառուցապատմ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 7 | Ապարան | 02-002-0058-0082-հց | 0.00119 | կապի | Բնակավայրերի հասարակական կառուցապատմ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 8 | Քուչակ | 02-111-0068-0001-հց | 0.04536 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 9 | Թթուջուր | 02-046-0021-0002-հց | 0.05589 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի բնակելի կառուցապատ |
| 10 | Ապարան | 02-002-0104-0018-հց | 0.0084 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հասարակական կառուցապատմ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 11 | Ապարան | 02-002-0104-հց | 0.00025 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հասարակական կառուցապատմ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 12 | Ապարան | 02-002-0104-հց | 0.00038 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հասարակական կառուցապատմ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 13 | Եղիպատրուշ | 02-040-0055-0029-հց | 0.0067 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի բնակելի կառուցապատ |
| 14 | Թթուջուր | 02-046-0027-0001-հց | 0.03408 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի բնակելի կառուցապատ |
| 15 | Ապարան | 02-002-0130-0058-հց | 0.00161 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 16 | Ապարան | 02-002-0130-0133 | 0.00269 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 17 | Ապարան | 02-002-0058-0048-հց | 0.00352 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 18 | Ապարան | 02-002-0138-0027-հց | 0.2 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |
| 19. | Ապարան | 02-002-0005-0001 | 0,09 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի հա-սարակ/կառուցապ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԻԴԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 79-Ա

### ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.04.2023Թ. N 44-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԻՑ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Ապարան համայնքի ավագանու 28.06.2023թ N 44-Ա որոշմամբ հաստատված՝ «Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող աճուրդ վաճառքի ենթակա հողատարածքների» աղյուսակի 17-րդ և 18-րդ տողերում ճգրտումների լրացուցիչ անհրաժեշտության հանգամանքը, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1. Ապարան համայնքի ավագանու 28.04.2023թ N 44-Ա որոշմամբ հաստատված աղյուսակի 17-րդ /հողամասի ծածկագիր՝ 0097-0020/ և 18-րդ /հողամասի ծածկագիր՝ 0097-0021/տողերը չեղարկել:

Ավագանի՝ (կողմ-17) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ... *05028552*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**28 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 80-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի դրույթներով.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է* .

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր և ժամ սահմանել՝ 2023 թվականի սեպտեմբերի 12-ը, ժամը 11:00:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Ապարան, Մարշալ Բաղրամյան 26:

Ավագանի՝ (կողմ-17) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Մխիթարյան Վարդան
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կարապետյան Արտյոմ
Կոստանյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ